նէս վարդապետ Հասանմանուրցի՝ խոստովանահայր ս-
բանց, և զԺողովն Տնօրէն, և ըստ այնմ սկսան կառավա-
րել զԱթոռն։ Վէճն որ ծագեցաւ 'ի մէջ միաբանաց և ազ-
գայնոց Կոստանդինուպօլսոյ՝ յայտնի է ամենեցուն. զի
միաբանք կամէին պահել զաւանդութիւնս Աթոռոյն, իսկ
ազգայինք կամէին զմի ոմն յեպիսկոպոսաց արտաքոյ մի-
աբանութեան կարգել յԱթոռ Պատրիարքութեան. ասսի
սկսաւ և վէճն և երկարեցաւ խռովութիւնն. Տէր Յովհան-
նէս քահանայ Հիւնքեար Պէյենտեան եկն յԵրուսաղէմ
վասն այսր խնդրոյ՝ այլ չշահեալ ինչ դարձաւ յետս։ Եւ
զի միաբանք կամէին ընտրել զՍահակ վարդապետ Բա-
բերդցի, Փոխանորդ 'ի Կոստանդինուպօլիս, ուստի հարկ
եղեւ նմա գնալ յԷջմիածին և ձեռնադրիլ յեպիսկոպոս,
եւ 'ի վերջին ընտրութեան նա չշահեցաւ 'ի միաբանաց
զառաւել քուեայս, բայց ճախորդութիւն և անյաջողու-
թիւն գործոյն երկարեաց զխնդիրն։

Ի սմին ժամանակի նախկին Պատրիարք Կոստանդինու-
պօլսոյ Յակոբ Եպիսկոպոս՝ այր ալեւոր և ծերացեալ, եկն
յԵրուսաղէմ 'ի պատճառս ուխտի, ընդ իւր ունելով զՅ-
ովհաննէս վարդապետ Սէթեան. որ եւ 'ի հասանելն 'ի
Յոպպէ՝ հանին զնա պատուով 'ի նաւէ, և յարգանօք ն-
կալան 'ի վանս. եկեալ էին և յԵրուսաղէմէ Վարդապետք
'ի յարգանս և յողջոյն նորին, զոր առեալ տարան փառաւք
'ի քաղաքն Սուրբ եւ պատրաստեցին նմա արժանաւոր
տեղի 'ի վանս, և զկնի աւուրց ինչ դիպուածով վախճա-
նեցաւ և թաղեցաւ 'ի վանս Ս. Փրկչի (1862. Նոյեմբեր 6)։

Մարաշցի Մեսրովբ Եպիսկոպոս միաբան Սսոյ և երբեմն
Առաջնորդ Անտիոքայ եւ Անթէպի միաբանեցաւ 'ի վանս
յաւուրս Յովհաննու Պատրիարքի, և սա միայն էր Եպիս-
կոպոս յաւուրս յայտոսիկ և ինքն կատարէր զեկեղեցական
պաշտօնս և զհանդէս 'ի Ս. Տեղիս, և սա եւս վախճա-
նեցաւ (1863. Մարտ 14)։

Իսկ 'ի գումարման վերջին անգամ միաբանական ընդ-
հանուր ժողովոյ սակս ընտրութեան Պատրիարքի Ս. Աթո-
ռոյն, զկնի քուէարկութեան ազգային սահմանադրութեան
օրինօք, արդիւնք քուէից հանրական գրով առաքեցաւ
'ի Կոստանդինուպօլիս, և անդ յազգային ժողովի ընտր-